

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Հոկտեմբերի 6-ին եւ 7-ին դամասկահայ գաղութը ապրեցաւ յիշատակելի եւ բացառիկ երկու օրեր՝ Դամասկոսի Առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցւոյ մէջ քահանայական ձեռնադրութիւն եւ օծում ստացաւ բարեշնորհ Գաբրիէլ սարկաւազ Թանաշեանը, ձեռամբ թեմիս բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալպանտեանի:

Ազգային իշխանութեան, Դամասկոսի քոյր եկեղեցիներու ներկայացուցիչներու եւ հաւատացեալներու նկատելի ներկայութեամբ, Շաբաթ 6 Հոկտեմբերին, երեկոյեան ժամը 6-ին տեղի ունեցաւ կոչման արարողութիւնը, իսկ Կիրակի 7 Հոկտեմբերին եւ յընթացք Սուրբ եւ Անմահ Պատարագին, որ մատուցեց Սրբազան Հայրը, խարտավիլակութեամբ Տէր Աբգար եւ Տէր Տրդատ քահանայ Հայրերու, Առաջնորդ Հայրը ձեռնադրեց եւ օծեց Գաբրիէլ սարկաւազը վերանուանելով «Տէր Հայարի քահանայ»:



հանայ»:

Սրբազան Հայրը իր քարոզով ամփոփեց ձեռնադրութեան եւ օծման արարողութիւններու իմաստն ու խորհուրդը, ապա «Հայարի» անուանման յղացումը բացատրեց ըսելով. «Նորընծայ քահանան «Հայ» անուանեցինք իր մէջ տեսնելով հայրենասիրութիւն եւ ազգասիրութիւն, իսկ «Արի», որ խրախոյս հանդիսանայ անոր, պահելու նոյն ոգին եւ յարատեւելու նոյն ուղիով եւ մօտեցումով իր առաքելութեան մէջ, եւ քաջաբար ծառայելու եկեղեցւոյ եւ ազգին եւ իրեն վստահուած հօտին քաջ եւ արի հովիւր դառնալու նախատեսութեամբ»:

Կնքահայրութեան պաշտօնը վստահուեցաւ թեմի ազգայիններէն պատուարժան Տիար Վարդգէս Պողոսեանին:

Պատարագին եւ օծումին ետք բոլոր ներկաները նորընծայ քահանայ Հօր օծեալ աջը համբուրեցին, եւ աղօթակցելով անոր յաջողութիւն մաղթեցին իր սրբազան առաքելութեան մէջ:

Ապա պաշտօնական ընդունելութիւն տեղի ունեցաւ եկեղեցւոյ դահլիճէն ներս, որու ընթացքին առաջնորդ Սրբազան Հայրը եւ նորընծայ քահանայ Հայրը ընդունեցին ներկաներուն շնորհատրութիւններն ու բարեմաղթութիւնները:

Նորընծայ քահանայ Հայրը իր քառասնօրեայ ապաշխարիութեան եւ պահեցողութեան աւարտին, իր անդրանիկ Պատարագը պիտի մատուցէ 11 Նոյեմբերին Սուրբ Սարգիս եկեղեցւոյ մէջ:

Տէր Հայարի քահանայ Թանաշեանի Կենսագրութիւնը

Աւագանի անունով Գաբրիէլ, որդի Ներսէսի եւ Անահիտի, ծնած է Հալէպ 1965 թուականին: Նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն Կրթասիրաց, իսկ միջնակարգ եւ բարձրագոյն ուսումը Հ.Բ.Ը. Միութեան Լազար Նաճարեան վարժարաններուն մէջ: 1984-ին ստացած է «Մուրիական Պետական Պաքալորիայ»-ի վկայականը, ապա ընդունուած Հալէպի Պետական Համալսարանի Շինարարական մասնաճիւղը:

Ուսանողական տարիներուն անդամակցած է Հ.Հ.Հ. Միութեան (Հալէպի Հայ Համալսարանականներու Միութիւն) եւ միութեան վարչութեան անդամ ընտրուելով ցուցաբերած է ազգային եւ միջուսանողական գործունէութիւն:

Միաժամանակ յաճախած է Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարանը եւ աւարտելով 1984-ին, որպէս ուսուցիչ երկար տարիներ պաշտօնավարած է նոյն վարժարանին մէջ, մասնակցելով զանազան ուսուցչական համագումարներու:

1990 թուականին ամուսնացած է շնորհալի եւ եկեղեցասէր Մակի Հինտոյեանի հետ, որ ուսմամբ գիտատնտես է: Ունի երկու զաւակներ (Անի 16 տարեկան եւ Արամազդ 6 տարեկան):

2003-2005 թուականներուն հետեւած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Զարեհեան դպրեվանքի քահանայից երկամեայ խտացեալ դասընթացներուն, որուն շնորհիւ ստացած է համապատասխան վկայականը եւ ձեռք բերած է եկեղեցական եւ ծիսական գիտելիքներ:

24 Դեկտեմբերին, ձեռամբ Դամասկոսի թեմի բարեջան առաջնորդ Գերշ. Տէր Արմաշ եպիսկոպոս Նալպանտեանի ստացած է սարկաւագական աստիճան:

Այս տարուայ ամրանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ աւարտելով եռամսեայ վերապատրաստման շրջան մը, առաւել եւս հարստացուցած է իր եկեղեցական եւ ծիսական գիտելիքները, եւ ստանալով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի օրհնութիւնը, վերադարձած է Դամասկոս:

Տէր Հայարի քահանան Դամասկոսի թեմի բարեջան առաջնորդ Գերշ. Տէր Արմաշ եպիսկոպոս Նալպանտեանի տնօրինութեամբ եւ Ազգային իշխանութեան հաւանութեամբ պիտի կոչուի հոգեւոր ծառայութեան Դամասկոսի թեմէն ներս: